


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ

Պազար Մուրուր, ԳԱՀԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրի համար արեկն. ողջ դճ. 80
վեցամսեայ 50
Թատր երկիրներ արեկն. Զրաճ 25
վեցամսեայ 14
Թարգմանի ծախսը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի արժի:

ՄԱՍՈՒԼԻ ԹՅՆԱՄԻՆԵՐԸ

Անցեալները, Կովկասեան Սուրհանդա-
կէն առնելով ծանուցինք թէ Թէհրանի մէջ
հրատարակուող ազգային միակ լրագիրը, Շա-
ւիղ, դադարել է. և աւելցուցինք մեր կողմէ
«բաժանորդներու փութկոտութեան շնորհիւ
անշուշտ»: Մեր այս նշխարութեան մէջ սը-
խալեր ենք եղեր... դժբաղդաբար:

Այս ցաւի արտայայտութեան մի՛ հետեւ-
ցունէք սակայն, թէ բաւականաչափ թուով
ընթերցող ու ապահով վճարումներ ունենա-
լը բարեբաղդութիւն մը չենք համարիր ո՛ր և
է հայ թերթի համար. միայն թէ, Շաւիղը
իր հրատարակութիւնը դադարեցունելու հար-
կին մէջ գտնուելու է այն տեսակ պատճառով
մը որուն քով նիւթական նեղութիւնը, ծախ-
քերուն չի կրնար դիմանալը շատ հեշտ պիտի
երեւնար. այդ պատճառով՝ բարոյական հա-
լածանքն է, անբարոյական կերպով ուղղուած:

Պ. Ա. Բէկնազարեանց, արտօնատէր-հր-
րատարակիչը, նամակ մը ուղղելով Մշակին,
համառօտ բացատրութիւն մը կուտայ որուն
մէջ ակնյայտի կերեւայ թէ Պարսկաստանի
մայրաքաղաքին մէջ ալ, տեղական հանգա-
մանքներէ օգտուելով, գտնուելու են հայեր
որոնք լրագրի մը համարձակ խօսութիւնէն,
քննադատութեան իրենց վրէժը լուծելու ա-
մենէն պարզ ճամբան կը համարին կառավա-
րութեան դիմել, —նոյն այն տխուր երեւոյթը
որ իր ամենէն անպատկառ ձեւերուն տակ
երեւան եկաւ վերջին տարիները մանաւանդ,
Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ:

«Շնորհիւ չարամիտ մարդկանց էնդրիկ-
ների, կըսէ Պ. Բէկնազարեանց, և ինձանից
անկախ պատճառներով՝ պարտաւորեցի ժա-
մանակաւորապէս դադարեցնել նրա հրատա-
րակութիւնը»: Պարսկահայ խմբագիրը, որ կե-
րեւայ թէ իր միջավայրէն հեռանալու և թեր-
թէն հրաժարելու միտք չունի, բնականաբար
կը զգուշանայ հրապարակաւ մանրամասնու-
թեանց մտնելէ. բայց այս տխուր ու ալօտ
բացատրութիւնը բաւական բացայայտ է ար-
դէն. դժուար չէ գուշակել թէ, միապետա-
կան երկիրներու մէջ, «ինձմէ անկախ պատ-
ճառներով» ինչ կը նշանակէ. լրագրի մը —
քանի որ լրագրի վրայ է խնդիրը — զրպար-
տութեան ենթարկուելը ու իշխանութեանց
աչքին կասկածելի ցոյց տրուելը: Շաւիղին

հակառակորդները, կատարեալապէս չի յաջ-
դելով իրենց այս ստոր փորձին մէջ, երբ կը
տեսնեն թէ երկու ամիս ետք Պ. Բէկնազար-
եանց վերստին կը ստանայ իր թերթին հրա-
տարակման արտօնութիւնը, նոր հնարք մը
կը խորհին, այս անգամ դրամի ուժին դի-
մելով: Շաւիղին տպագրական մեքենան պար-
սիկ կառավարութեան կը պատկանէր ու
վարձքով առնուած էր. պայմանաժամը կը
լրանար ճիշդ այն միջոցին ուր, երկամեայ
դադարումէ ետք, նոր թիւ մը լոյս կը տես-
նար. մամուլի թշնամիները, որոնք սովորա-
բար հարուստ դասին մէջ կը գտնուէին, կը
կրկնապատկեն վարձքը ու մեքենան իրենց
ձեռքը կանցունեն, թէեւ անգործածելի թող-
լու համար. փոյթ չէ, քանի մը հարկւր քու-
ման կամ դրամ զոհել, բայց թերթը լու-
ցընել: Գիտե՞ք որքան պարզելի նոյնքան ինք-
նատիպ չէ՞ք գտնել:

Խեղճ Բէկնազարեանցը, որ կամբի ու
գաղափարի տէր հրապարակագիր մը ըլլալու
է, Յոր երանելիի համբերութեամբ ճամբայ
ելեր է մինչեւ Ռուսաստան երթալու համար
ուր մամուլ մը պիտի գտնէ ու շարիէ Թէհրան
տանի: Զի պիտի զարմանանք, եթէ օրին
մէկն ալ լսենք որ պարսկահայ ջոշերը կամ
մենձ աղաները քաղաքին տպագրական թուղ-
թերուն կամ մեղանին մենաշնորհը գնելու
այդ երկու անհրաժեշտ տարրերէն զրկելու
համար թերթը որ իրենց ջիղերուն կամ գու-
ցէ հանրային շահերուն կը դաշի:

Այս տեսակ իրողութիւններ իմանալով,
մարդ չի կրնար զսպել ակամայ և մեղամաղ-
ձառ ծիծաղ մը «մամուլի ազատութիւն» բա-
ցատրութեան հանդէպ որ այնքան անձկանօք
կարտատանտի մեր մէջ. տո՛ւր այդ ազատու-
թիւնը, և կը տեսնես որ միշտ պիտի գտնուի
խումբ մը կամ խմբակներ որ զայն կապտե-
լու, կաշկանդելու պիտի աշխատին: Ենթադ-
րելով թէ խմբագիրը գիտցաւ օգտակար և
ուղղամիտ կերպով վայելել այդ ազատութիւնը,
—վասնզի այս ալ էական կէտ մըն է, գրչի
այն զեղծումներուն մէջտեղ որոնց մէկէ աւելի
տխուր օրինակները տեսնող անկախ միջա-
վայրեր եղած հրատարակութիւններուն «շնոր-
հիւ» — մեքենայութիւններն անպակաս պի-
տի ըլլան անոր դէմ, ու իրենց ծրագիրնե-
րուն ի գերեւ ելլելը տեսնող մարդիկներ պի-
տի փնտռեն «հին բարի ժամանակները» ուր
ղազեքա չի կար այդ երկրին կամ քաղքին

մէջ: Այս հառաչանքը եթէ սուր կերպով կար-
տայայտուի Թէհրան, խեղդուկ շեշտով մըն ալ
կը լսուի երբեմն Եզրագրու:

Եւ սակայն ամենէն գործնական ու վե-
հանձն ճամբան պիտի ըլլար, այն ամեն տե-
ղեր ուր գանգատողներու լէզուններ կան,
միանալ, մեծ կամ պզտիկ դրամագլուխ մը
գոյացնել, խմբագրական մարմին մը կազմել
ու ինչպէս կընեն Եւրոպայի մէջ զոր չենք
դադրիր մեզի օրինակ հռչակելէ, հակառա-
կորդ թերթ մը մէջտեղ նետել. եթէ իրենց
պաշտպանած դատն է արդար, եթէ միասնի
տեղ օգուտ ունին հանրային գործերու մէջ,
եթէ ազգասէր ժողովական, անշահախնդիր
բանկալապետ, պարիշադ հակող, են, ժողո-
վարդը դիւրաւ պիտի համոզուի իրենց ու
ձեռք քաշէ զիրենք անիրաւ տարւ քննադատող
լրագրիչն:

Ահա՛ մեր միակ խորհուրդը զոր կրնանք
տալ, մօտէն կամ հեռուէն, այն դատակար-
գին որ լրագրի մը դէմ իր կատաղութիւնը
գոհացնելու միջոցը կը սեպէ զայն դադարեց-
նելու աշխատիլ և կամ մամուլէն զրկել: Այդ
կերպով, թերեւս տակաւ առ տակաւ մեր
մէջէն հեռանայ խաւարամիտ բարքերու այս
կեղտոտ հետքը:

ԵՐԵՄԻԱՅԻ ՏԵՍԻԼԲԸ

Seigneur, vous m'avez fait puissant et solitaire
Laissez-moi m'endormir du sommeil de la terre.
(A. de Vigny—Moïse)

Մութ գիշեր է: Ոչ լուսին ոչ ալ աստղեր կերեցան:
Սեւ ըստուերը անթափանց տարտուներով խաւարին
կը տարածուի ամէն կողմ, կը պարփայլէ ամէն բան,
Խորհուրդ կուտայ ջայներուն, հոգի կուտայ անտառին,
Տերեւազուրկ ծառերուն, խեղճ ծառերուն անկենդան
Գալարումները կուտայ տառապանքին մարդկային:

Դէպ ի Սիւն մազըցող խորտորուրտ ուղիներէն
Ո՛վ է ան որ յամբարէն վեր կըլլայ բազկատարած,
Երկայն հասակը ծըռած անդադար աղօթելէն:
Անկերպարան ուրու տկան ըստուերին հետ խառնուած
Ընտրուածը Աստուծոյ կը յարձրանայ յամբարէն
Սիւնն ի վեր մազըցող ուղիներէն, գետնամած:

Ու երէմիա կաղօթէ լեռան վըրայ ծնրողիւր.
«Ո՛րքան տեսայ հերթէ աչքներով սրբազան
Տառապանքը սիրական ժողովուրդիս տարագիր.
Տէր Աստուած Խորայէլի, Աստուած հըզոր ու զէտմ,
Դուսն որ խոնարհ վիճակի զիս բու ընտրածը ըրիր
Լա՛կ՝ հիմա աղօթքիս, լա՛կ իմ՝ ծայրեւ Աստուած»:

Ենայն անգոր ծունկերուս, նայէ դողող ձեռքերուս,
Ալ յողներ եմ անէծքէ, ալ մաշեր եմ արցունքէ,
Ինչո՞ւ ինձի միւ միմակ երկրիս վըրայ կը թողուս

Ձիւ՝ աղէտքի մարգարէ չարագուշակ: Հերիք է
Ձըգէ հանդարտ քնանամ՝ մեռելներուն քով անցնայ,
Մեռելներուն քով հանդարտ մեռելներով զիս ձըգէ:

«Խորայէլը մեզը գործեց, բայց դուն գիտես զո՞ւրք միայն
թէ պատուէրներդ խիստ են ու Մարգը չափ անկա-
տար
ինչո՞ւ Մեզը ստեղծել ձեռքով տակ զանազան,
Հըրապարտ քողերով զարդարել զայն անդադար,
Երբ Մարգն այնչափ գերի է իր կիրքերուն ցանկա-
թեան,
Երբ մարգը այնչափ թող է ու կամքը այնքան արկար:

«Այլ յոգներ եմ ապրել, ձրգէ ինձի բընանամ:
Սիրնի վերայ հանգարտ, Սաղիմի մօտ սիրական,
Խեղճ Սաղիմին աւերակ, ինձի ըսէ է բիւր անդամ
Գլուխ հողին տակ թաղել ու շրտել մշտական
Արձագանդներն անկէքիս Ձըգէ ինձի քնանամ,
Այլ ձեռք եմ տանջանքէ, բաւական է, բաւական է»:

Երկայն աստիճանով մինչեւ որ ձայնը հասաւ:
Յետին շէտը նըւազկոտ՝ յուսահատի տղապակ՝
Կողքուցաւ մարեցաւ ամայութեան մէջ անբաւ:
... Ետեւորդ օրը սարսեցաւ իր հիմերէն անյատուկ,
Ետեւոր մը անցաւ ահապ ու Ձայն մը անոր բաւ:
«Հոն նայէ հոն, գորդարուած ժողովրդի պատուի-
րակ...»

... Արշաղայր կը ծագէր բազմին վերայ տեղակ:
5 փետր. 98 ԼԵՒՈՆ ԱՐԱՄԵՆ

ՀԱՅԵՐՆ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

Կարկաթայ հրատարակուող անգլիա-
կան Սթաթիսթիկ լրագրի յունուար 25ի թի-
ւին մէջ հաճաքով կը կարդանք թէ քաղքին
մէջ ըստ սովորութեան կատարուած ժողո-
վրդային զինուորական մարզանքներուն մէջ
հայերէ կազմուած խումբը (Armenian College
Cadet Company) այդ օրուան մարզահանդէսին
մէջ պատուաբեր առաջնութիւն մը ունեցած
է միւս ամեն ազգի խումբերուն վրայէն դու-
հունակութիւն պատճառած է այդ մարզանք-
ները վարող անգլիական սպայակոյտին:

ԱՅԺՄԷՈՒԹԻԻՆ

ՀԱՐԱՆԻՔՆԵՐ

—Ինձի կտունե՞ս:
—Կտունեմ:
Եւ գաղթականները զոյգ զոյգ կը կար-
գուին կոր, à la bonne heure!
Երանի՜ անոնց: Փիլիսոփայութեան ի՞նչ
մեծ պաշար կայ եղեր այդ սարագիրներուն
քով:
Advienne que pourra՝ անա՛ իրենց նը-
շանաքանք. ապա թէ ոչ իրենց այս անհաս-
տատ վիճակին մէջ եւ անորոշ ապագայի մը
առջեւ չպիտի յանդգնէին իրենց ուսերուն
վրայ կենկան մը բեռն առնել, նոյն իսկ եթէ
այդ կիկն փեսարի մը պէս քեթել ու վար-
դի մը պէս աղոռ ըլլար:
Եւրոպացիները երբ մեր գաղթական-
ներուն վիճակին մէջ կը գտնուին, վիճակ
մը յուսահատութեան մօտ, ամեն քան կը
թողուն եւ քաղք փնտնելու համար կը ծաւ-
րորեն. իրաւ որ մեր գաղթականներուն ը-
րանքն աչ ծամբորդութիւն է. միայն այդ եր-
կու ծամբորդութեան մէջ... տապաւնի
սարքերութիւն մը կայ:
Փոխանակ Բօնք Արթուրի, Թրանսիլա-
ւի, Բոլսայի մէջ իրենց քաղք փնտնելու,
եւ արկածաշիջ կեանքի մը մէջ իրենց զի-
րենքն անտէր, շաւաղոյն կը սեպեն աղջկան

մը քեւերուն մէջ անտէր ուր կեանքը աւե-
լի կակուղ է եւ հեշտալի:

Իրենց այդ ամուսնութիւններով՝ անե-
սական մեծ հարց մը կը յղծեն անգլիակ-
ցաբար: Որովհետեւ «Առեալ գնեալ եւայի»
դրութեանը երկու մարմին մէկ կընեն, մեր
գաղթականները իրենց քիւր Օ/Օին յիսուն
կը գեղջեն կոր, դրութիւններուն ամենէն
հաճելիովը:

Երջանիկ պիտի ըլլա՞ն. ինչո՞ւ չէ: Եր-
բեմն, չքանցու համար շատ անգամ, անհա-
շիւ գործերը աւելի կը յաջողին քան թէ մը-
տածուածները:

Ամեն պարագայի մէջ, ասոնց ամուս-
նութիւնները եւ ոչ մէկուն կը վիստէ, ընդ-
հակառակը: Նախ աղջիկներուն քիւր կը
պակսեցնեն, ինչ որ պզտիկ ծառայութիւն մը
չէ, եւ յետոյ կը նպաստէ քաղաքացիա-
քեան, որուն շատ պէտք ունի: Բայց ա-
մենէն մեծ serviceը մեր քաղաքականներուն
մասնացած կըլլան, հաստատե՛ք:

Առաջնորդարանի յենց գիտէր ո՛ր ժո-
ղովիին մէջ, ամեն բանի խառնուող անձնա-
ւորութիւն մը հրաւայած է որ փոխանակ
ամեն մէկ գաղթականի, ըստ սովորութեան
մէկ մէկ հաց տրուելու, աշտուհեաւ ամուս-
նացող զոյգներուն երկու հացի տեղ մէկ հաց
տրուի:

Ձե՞ս մի որ երկու անձ մէկ կընեն ա-
մուսնութեամբ:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Քեօյնիցէ Ձայրունի կը հաւատէ թէ
Ռուսիա պիտի չէ թուրք կառավարութեան
մօտ որպէսզի իր զօրքերը հանէ Թեաթիսէն.
Բայց Դուռը պատասխաններ է թէ Թուրքիա
այն ատեն միայն պարտաւոր է Թեաթիսէն
պարպելու երբ Յունաստանի ելեւմուտքին վրայ
հաստատուած քոնդրոյը օրինական վաւերա-
ցում ստանայ ու պատերազմական տուգան-
քին վճարումը ապահովուի:

Միւս կողմէ, կը ծանուցուի թէ Անա-
տոլիէն բազմաթիւ բէտիք զօրքեր կը փո-
խադրուին Թեաթիսէ, այնտեղ գտնուած ին-
չըստին վաշտը պատերազմական վիճակի մէջ
դնելու համար:

—Անատոլի մէջ երկաթուղիներու մե-
նաշնորհ ստանալու համար գերման եւ անգ-
լիացի դրամատէրներուն սաստիկ մրցման
պատճառաւ, այս օրերս իրատէ մը ելեր է
որ կը հրամայէ՝ այդ տեսակ մենաշնորհի որ
է առաջարկ չընդունիլ:

—Սուլթանին խորհրդական Իզզէթ պէ-
յի ձեռքակալումը որ այնքան ազմուկով ծա-
նուցուած էր Պէրլինի ու Վիեննայի թերթե-
րուն մէջ, հիմակ ալ տարակոյտի տակ կը
ձգուի: Նոր զրոյցի մը նայելով, Իզզէթ պէ-
յի վերադարձած յանցանքն է ռուսական դես-
պան Պ. Ջինովիէֆի հետ շատ խիստ ոճով իր
մէկ տեսակցութիւնն. ու դիտողութիւնները
որոնց դէմ բողոքներ է եղեր Պ. Ջինովիէֆ:

—Կ. Պոլսոյ ռուսական դեսպանը իր կա-
ռավարութեան հազարդեր է արտաքին գոր-
ծոց նախարար Թէվֆիկ փաշայի խոստումը
թէ Յունաստանէն առնուելիք պատերազմա-
կան տուգանքին 25 միլիոն ֆրանքը պիտի
վերապահուի Ռուսիոյ պահանջը վճարելու.
Բայց տարակուսելի կերպով որ այս խոստում
գոհացում տայ ռուս կառավարութեան փա-
փազին:

—Հեղինական խորհրդարանն ի նիստ
պիտի գումարուի յառաջիկայ երեքշաբթի,
նկատողութեան առնելու համար քոնդրոյի
յանձնաժողովին ծրագիրը ինչպէս նաեւ Թրան-
սայի, Անգլիոյ եւ Ռուսիոյ կողմէ երաշխա-
ւորուած փոխառութեան ծրագիրը:

—Նաւային երկու ծանր արկածներու
լուրը հասաւ շաբթուս: Ամերիկեան Մէյն
մարտանետը, հովանաւի նաւահանգստին մէջ,
պայթում մը ունեցեր է: Երեք հարիւր հոգի
մեռեր են եւ բազմաթիւ վիրաւորեալներ կան:
Նոյնպէս Թրանսիլանիի ընկերութեան
Փրաշա ֆրանսական շոգենաւը Թէնըրիֆի մօտ
ընկղմեր է: Յիսուն ուղեւոր ու երեսունըւթ
նաւաստի խղճուեր են:

ՁՕԼԱԻ ԴԱՏԸ

Աւասիկ հինգշաբթիէն ի վեր յաջորդա-
բար Բարիզէ հասած հեռագիրները:

Հիւնզարթի, 17 փետրվար. — Նիստը
հանդարտ է: Ձեռագրի մասնագէտ քննիչ-
ները կը շարունակեն իրենց վկայութիւններ
որոնք հակասական են: Բէլլիէօ զօրավարը
կը բողոքէ կարգ մը քննիչներու առարկու-
թեանց դէմ, որոնք՝ կըսէ՝ ձեռքերն ունե-
ցած չեն պօսքորօին բնագիրը. յետոյ բուռն
ոճով մը կը խօսի բանակը արատաւորող պայ-
քարին դէմ:

Նոյն թուականով Ռիւզէր ալ կը հեռա-
գրէ հետեւեալը.

«Բէլլիէօ զօրավարը մեծ յուզում առաջ
բերաւ յայտարարելով թէ ամբաստանեալնե-
րու փաստաբանները իրենց պաշտպանողական
ճառերով կը միտին զինուորներուն իրենց պե-
տերուն վրայ ունեցած փոխհովանք խախ-
տել: Վտանգի օրը լծերեւս կարծուածէն ա-
ւելի մօտեցած է, անեցուց»:

Ուրբաթ, 18 փետրվար. — Բէլլիէօ զօրա-
վարը կարեւոր յայտարարութիւն մը ըրաւ,
թէ Տրէֆիւսի դատապարտութենէն ետք պա-
տերազմական նախարարը նոր ապացոյց մը
ձեռք ձգած էր նախկին հարիւրապետին մե-
ղապարտութեան: Ծանուցագիր մըն է եղեր,
որ սա բառերով կը վերջանար «մի՛ բռնք բնաւ
թէ մենք յարաբերութիւն ունեցանք այդ
հրեային հետ»: Նիստը վերջացաւ բուռն յուզ-
ման մը մէջտեղ:

—Բէլլիէօ զօրավարին վկայութեան նը-
պատակը կը նկատուի՝ աղբեղութիւն բանե-
ցրնել երգուեալ դատաւորներուն եւ երկրին
վրայ եւ արգիլել Տրէֆիւսի գործին վերաբա-
ցումը, վասն զի ընդհանրապէս ակնհայտ կը
դառնայ որ պաշտնի պաշտօնագրերու վրայ
Տրէֆիւսի դատապարտութիւնը ապօրինա-
ւոր է:

Ուրբաթ, 18 փետրվար. — Պուատէֆի զօ-
րավարը հաստատեց այն ծանուցագրին վա-
ւերականութիւնը որուն գոյութիւնը երեւան
հանած էր Բէլլիէօ զօրավարը երէկի նիստին
մէջ: Յետոյ, երգուեալ դատաւորներուն դառ-
նալով, գոչեց «ընէ՛ք, կաղաչեմ, թէ բանա-
կին պետերը ազգին վստահութիւնը կը վա-
յելե՞ն»: Իրմէ ետք, ըստեցաւ տեղակալ-
գնդապետ Բիքաուի վկայութիւնը, որ կը հեր-
քէ այդ ծանուցագրին վկայութիւնը:

Նիստը վերնալու պահուն հրմշտուկում-
ներ պատահեցան:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Առաջնորդական Տեղապահ Հայրն հետեւեալ պաշտօնական նամակն ուղղած է Ընդհանուր Ժողովոյ ատենապետ Տիգրան փաշային .

Վսեմախոյը Փաշա՛

Քննեալ տարւոյ մայիսի մէջ կոչուեցանք վիճակիս Առաջնորդական Տեղապահութեան պաշտօնին, Գաւառական Պատ. Ժողովոյ միասնայն հաւանութեամբ :

Գլխաւորով հանդերձ այս պաշտօնին փառաբանական զօրութիւնն հանգամանքն, ընդունելիք զայն ի սէր էկեղեցւոյ և ի վստահ մեզ ընտրող Ժողովներու աջակցութեան վրայ և ըստ պաշտօնական հրաւերի ընդհանուր Ժողովոյ զիւանդանին անմիջապէս ձեռնարկելիք մեր պաշտօնին, որ պիտի տեսէր մինչեւ վիճակիս Առաջնորդի ընտրութեան ժամանակն և որ յետոյ վաւերացաւ բարձրագոյն իշխանութիւններէն :

Ձեր Վսեմութեան Երոտայէ վերադարձէն յետոյ պատիւ ունեցայ երկիցս բերանացի Ձեր ուշադրութիւնն հրաւիրել այս ընտրութեան սկստիւն վրայ, որ սակայն յետագայեցաւ ց'արդ :

Հետեւաբար անգամ մ'իւս պատիւ ունիմ յայտարարել Ձեր Վսեմութեան թէ պարագաներն յանձին արժանաւոր և բազմաթիւ պահանջմանց զուհացում տալու կարող եկեղեցականի մը՝ վիճակիս առաջնորդական ընտրութեան հարկն առուել բան երբեք զգալի կընեն և կը խնդրեմ Ձեր Վսեմութենէ որ բարեհաճի այս առթիւ տնօրինել գ'արժանի անյայտ, վերջ տալու համար ժամ յառաջ մեր առժամանակեայ պաշտօնավարութեան, որ առաջին օրէն չընտրատուեցաւ անցելոյն մէջ նմանը չի տեսնուած արտակարգ և բացառիկ դժուարութիւններով ևս :

Հաճեցէք, Վսեմախոյը փաշա, այս առթիւ եւս ընդունել մեր յարգանաց հաւատարմը :

Մնամ՝ ազօրմարտ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՀԱՅՐՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԶԱԿԱՐԻ Ժ. Վ. ԱՅՈՏ

Գահիրէ, 5/17 փետր. 98

Թառաջիկայ հինգշաբթի, Ս. Վարդանանց զօրավարաց տօնին առթիւ, Առաջն. Տեղապահ Հայրը Պատարագ պիտի մատուցանէ Մարմինացի մատրան մէջ :

Նուպար փաշայի առողջական վիճակի մասին չաբժու սկիզբը Բարիզէ հասած հեռագրեր ընդհանուր մտահոգութիւն պատճառեցին : Նորադոյն հեռագրէ մը ուրախութեամբ կիմանանք թէ մեծանուն դիւանագէտը կատարելապէս ապաքինած է :

Արքահամ Բարթող պէյի հրաժարման վրայ՝ Աղեքսանդրիոյ Աղքատախնամ ընկերութեան Գործադիր Ժողովի ատենապետութիւնը առաջարկուեց Տիար Տիգրան Կամարականի, որ դիւանի ընտրութեան պահուն երկուքուն պակաս միայն ստացած էր այդ պաշտօնին համար : Կը սիրենք յուսալ թէ համակրելի գրագէտը ընդունելով այս առաջարկը իր կողմէ զարկ մը տուած պիտի ըլլայ Աղքատախնամին վերջնական կազմակերպութեան, որմէ այնքան բարիք կը սպասեն քաղաքին աղքատներն ու գաղթականները :

Մշակը ամենօրեայ թերթի վերածելու համար խմբագրութեան կողմէ խնդրուած արտօնութիւնը Ռուսիոյ ներքին գործոց նախարարութենէն հաղորդուած ըլլալով Կովկասի կառավարչապետին, յառաջիկայ փետրվար 1/13էն սկսեալ բարեյիշատակ Արծ-

րունի թերթը պիտի սկսի իբրեւ օրաթերթ հրատարակուիլ :

Ստացանք Նոր Կեանքի 3րդ թիւը Բովանդակութիւն .

Ապականութեան պատկանդարները (Արփիար Արփիարեան). — Արիւնը (Տիկին Մատի Սլաճեան). — Ձեյրուցիցի զգայ. Քերթուած (Վահրամ Սլաճեան). — Կովկասի Հայերը (Բիւռ Մուսան). — Ժամանակակից պատմութեան էջեր (Արփիար Արփիարեան). — Հայկակ սն խնդիրը Անգլիոյ եւ Ռուսիոյ ձեռքը (Լ. Զարթովեան). — Ժամանց. Տաւմ մը (Սկստիկ) :

Գահիրէի մէջ Մաժմակ անուն պարբերական հանգէս մը հրատարակուիլ սկսաւ, հայերէն տառերով ու թուրքերէն լեզուաւ : Խմբագիրն է Յովհաննէս էֆ. Պալըքեան : Առաջին թիւը որ լոյս տեսաւ երէկ, կը պարունակէ, յառաջաբանէն զատ, «Հէմ տէրտ հէմ թէսէլլի» վերնագրով յօդուած մը, պատմական տեսութիւն մը Սգիպտոսի վրայ, հատընտիր խօսքերու հաւաքածոյ մը, ոտանաւոր մը «Կիւլ իլէ էնգաճը», և լուրերու հաւաքածոյ մը : Յաջորդութիւն կը մաղթենք լրագրական այս նոր ձեռնարկին :

ՏԵՂԱԿԱՆ

Թառաջիկայ երեքշաբթի, Պայրամի առթիւ, Բարձր. Խորվը պաշտօնական ընդունելութիւն պիտի կատարէ Ապարիսի պալատին մէջ :

—Լորա և Լէտի Գրամը սրտնք դրօսական պտոյտ մը կատարելու գացած էին զէպ ի վերին Եգիպտոս, այսօր վաղը կը վերադառնան :

—Բօւ Սայիտէն երէկ իրիկուն հասած հեռագիր մը կը հաղորդէ թէ անգլիական Վիգորտիոս մարտանաւը որ խրած էր ջրանցքին մէջ, ազատուեց է :

—Նիւ Եօրի Հերթը լրագրին տէրը, Պ. Կորտոն Պէնէթ, որ քանի մը օրէ հետէ Գահիրէ կը գտնուէր, այսօր Սիւէզ կերթայ իր նաւընա զբօսանաւով Մասալա ուղեւորելու համար :

—Հեռագրական նոր կայան մը հաստատուած է քաղաքիս մէջ, Քրէտի Լիոնէի շէնքին մէջ . ամեն առաւօտ ժամ 9էն կէսօր և յետ միջօրէի ժամ 3էն 6 այդ կայանին մէջ պիտի ընդունուին արաբերէն ու եւրոպական լեզուներով հեռագրեր :

—Կըսուի թէ անգլիական պատական բանակը յառաջիկայ յունիսին պիտի սկսի իր յառաջնադասութիւնը զէպի Ռամուսման և Խարթում : Անգլ. զբաղիչ բանակին հրամանատար Սըր Ֆրանսիզ Կրէնֆէլ որ այս օրերս Վատի Հալֆա կուղեւորի, սէրտար Գիշնէր փաշայի հետ պիտի կարգադրէ այդ արշաւանքին վերջնական մանրամասնութիւնները :

—Օրէանի Հանրի իշխանը և Պ. Լէոն. Թիէֆ ամուսն 23ին Բօւ Սայիտ կը հասնին, Հապէշիստան ուղեւորելու համար :

—Խալիլի վաճառման առթիւ, շահեկանութենէ զուրկ չէ գաղափար մը ունենալ այդ ընկերութեան տարեկան ծախքին վրայ :

Տնօրնութիւն	6000	ոսկի
Գործակալութիւնք	9000	»
Նաւատորմ	90000	»
Նաւարանները	1000	»
	106,000	

ԱԿԱՄԱՅ ՀԵՐՈՍԸ

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Շարունակութիւն ճախորդ թիւէն

Լեւոնի միւս երկու ընկերներն ալ սկսան զիս համոզել որ իբրեւ նախկին յեղափոխական մը ներկայանալ Շապուհին և իրրեւ կամաւոր գրուիմ իր ցանկին մէջ, մինչեւ որ դորձ մը գտնեմ ու կարենամ գլխուս ճարը նայիլ :

Մտածելի որ քովս ունեցած երկու ոսկիովս ասկէ ուրիշ լաւագոյն բան մը չէի կրնար ընել, ուստի որոշեցինք որ իրիկունը միասին երթանք ճաշարան ու զիս ներկայացնեն Պ. Շապուհին :

Միայն թէ Յակոբ ազա՛ն անունով չէի կրնար ներկայանալ իրեն, ուստի պէտք էր կեղծ անուն մը ընտրել : Բաւական խորհրդակցելէ ետք որոշեցինք որ զիս ներկայացնեն Պ. Շապուհի ֆայրակեան անունով և իբրեւ Պոլսոյ կենդրոնական կոմիտէի նախկին անդամ :

Այս առթիւ Լեւոն ինծի սորվեցուց յեղափոխականներու լեզուն : Բոս. որ «անոնց» ըսելու տեղ «նրանց» ըսեմ, «էֆէնտի» կամ «ազա» ի տեղ «պարոն», թուրքերու վրայ խօսած ատենս «այդ փառերը», յեղափոխականներու վրայ խօսած ատենս «մեր ընկերները» և այլն : Պատուիրեց նաեւ որ երբեք խօսակցութեանս միջոցին «աղիւստար», «սոյլալիսթ», «գիւմուրատ» և շն. բառեր գործածեմ :

—Ատնցմէ զատ, աւելցուց Լեւոն, կրցածիդ չափ հայհոյէ Նազըմ փաշայի ու Հիւսնի պէյի դէմ :

Գ.

Երբ իրիկուն կերակուրին տեսնը հասաւ, Լեւոնին ու միւս երկու ընկերներուն հետ ուղղուեցանք զէպի ճաշարան :

Ճաշարանը Աթէնքի կայարանին մօտ ընդարձակ շէնք մըն էր որ միանգամայն իրրեւ գինեւորան և նպարավաճառի խանութ կը ծառայէր :

—Այս կողմէն եկ'աւ, գոչեց Լեւոն, և զիս առաջնորդեց ճաշարանին ներսնաւոր, ստանձին անեակ մը ու արդէն սեզան մը դրուած էր տասը տասնըհինգ հոգիի համար :

Երբ ներս մտանք եօթը ութը հոգի բազմած էին սեզանին շուրջը և մէջերէն մէկը բարձր ձայնով հայերէն թերթ մը կը կարդար . կամ Հնչակ էր կամ Դրօսակ, աղէկ մը չեմ յիշեր :

Լեւոն նստողներուն դարձաւ և զիս ցոյց տալով ըսաւ .

—Ձեզ կը ներկայացնեմ Պ. Շապուհի որ այսօր Պոլսէն հասաւ . մեր անձնուէր ընկերներէն մէկն է որ յաջողած է փախչիլ վատ թուրքերու ձեռքէն :

—Բարի եկաք, ըսին ամէնքը մէկ բերան ու ոտքի ելան ձեռքս թոթուելու համար :

—Պարոն Շապուհը դեռ չէկ'աւ, հարցուց Լեւոն :

—Հիմա տեսայ, պատասխանեց մին, բոսթան կերթար կոր նամակ փնտռելու և անմիջապէս հոս պիտի գար :

Քանի մը վայրկեան ետքը Շապուհ ներս մտաւ ուրիշ հինգ վեց հոգիի ընկերակցութեամբ :

Սեւ մօրուքով, անոնցաւոր երիտասարդ մըն էր, կարմիր այտերով, համակրելի՛ աշխոյժ գէմբով :

—Վաղուց եկել էր, հարցուց ներս մտած ժամանակ խօսքը ամենուս ուղղելով :

—Ո՛չ, նոր եկանք, պատասխան տրուեցաւ իրեն : Պարոն Շապուհ յանկարծ զիս տեսնելով կանկաւաւ և ուշադրութեամբ սկսաւ զէմքս քննել :

—Ես պէտք է ճանաչեմ՝ այս պարոնը, գոչեց . յետոյ ինծի դառնալով՝ յարեց .—Գուր գտնեմ'ը և ք Վառնայում :

Մէկէն ի մէկ չփոխեցայ չգիտնալով թէ ի՞նչ պէտք էր պատասխանել : Լեւոն միջամտեց անմիջապէս և ըսաւ .

—Պարոն Շապուհ, որ ձեզի ներկայացնելու բաւարարութիւնը ունիմ, չին գործիչ մըն է որ շատ թախառած է արտասահմանի մէջ, Պուլիտիս, Ռուսիայի, Յունաստանի, Եգիպտոսի, Կիպրոսի, վերջապէս քիչ մը ամեն կողմի Հաւանական է որ զինքը տեսած ըլլա՛ք Վառնայի մէջ :

—Այդ ցոյց է տալիս իր կերպարանքը, պատասխանեց Շապուհ խնդալով, ու սեզան նստանք :

Ճաշի ժամանակ խօսակցութիւնը ընտանաւոր Պոլսոյ ջարդերուն վրայ դարձաւ : Առաջին անգամ էր որ այս տեսակ սանձարձակ սեզանի մը կը մտ-

նակցելի, ուր յեղափոխականներու կենացը գինի կը պարպէինք ու թորքերուն դէմ լիաթօք կը հայհոյէինք:

Եւ ի՞նչ գինի, բարեկամ, այն պատուական ռեզինան, զոր առաջին անգամ թէեւ քիչ մը լեզուի վրայ, բայց անգամ մը վարժուելէ ետքը ա՛յլ չկրցայ ձգել: Գլուխ տարցաւ, ես ալ սկսայ բերնիս եկածը դուրս առլ:

—Այո, պէտք է նրանց ջախջախել, կը գոչէին ատեն ատեն, գոտաթոս սեղանին զարնելով:

Եւ այդ սնրանցը արտասանած ժամանակս յաղթական ակնարկներ կը նետէի Լեւոնին՝ զգացնելու համար որ իր ուղակիւրտը խակ մէկը չէր:

Այդ պէտք է նրանց ջախջախել, այնչափ կրկնեցի որ վերջապէս հարցուցին ինձի թէ՛ ի՞նչ միջոց խորհած էի նպատակիս հասնելու համար:

—Միջոց, միջոց կայ, գոչեցին, ռեզինայի գոտաթ մըն ալ պարպելով:

—Ուրեմն ծրագիր մը ունիս. չո՛ւտ ըսէ տես, նենք, պտուղներ ամէն կողմէ:

Ծրագիր, «նրանց ջախջախելու», համար, ճշմարիտը ասանկ ըսն չի կար բովս, բայց պէտք էր պատասխանել: Լեւոն իսկ՝ ասի ի բերան՝ երեսս կը նայէր:

Շուտաւ մտայեք էի, երբ աչքիս հանդիպեցաւ ճաշարանին պատին փակցուած նկար մը, պատկերազարդ թերթի մը կտորը, որ բարձրացած օդու պարիկ մը կը ներկայացնէր:

Այդ պատկերը փրկեց զիս:

—Այո, ունիմ ծրագիր մը և հիմա պիտի բացատրեմ, ըսի, յետոյ Լեւոնին դառնալով գոտաթոս երկնցուցի.— Հատ մըն ալ լեցո՛ւր նայինք սա ռեզինան:

—Քիչ մարդով, քիչ ստակով, յանդուգն գործ մըն է ծրագիրս, վրայ բերի, տուէ՛ք ինձի երեք չորս օղակալարիկ ու տասնըվեց կտրիճ մարդ ու բանի մը մի խառնուիք:

Ամէնը շարժեցան այդ օղակալարիկէն, նոյն խակէս:

—Դա մի բաւ պահ է, բացառանջեց Շուտուէ:

Այդ հաւանութիւնը աւելի քաջալերեց զիս և սկսայ բացատրել թէ ինչպէս չորս օղակալարիկով Պոլսոյ վրայ կարելի էր իջնել ու սարսափ ձգել ամբողջ քաղքին մէջ:

Երբ խօսքս վերջացուցի ամէնքը սկսան ծափուհարել և անանկ աղմուկ մը հանեցին որ խանութը գոնուող յայնքը տեղերէն ելան ու մեր շուրջը բոլորուեցան և հետաքրքրութեամբ հարցուցին թէ ինչ կը նշանակէին այդ ծափահարութիւնները:

—Մօ տղաք, ըսաւ Պետրոս անուն երիտասարդ մը՝ որ Մինաս կըսուէր, կեցէք ասոնց թարգմանեմ, ասոնք ալ կրեապի ու Մակեդոնացի յեղափոխականներ են. թող տեսնան որ մենք ալ իրենցմէ վար չենք մնար:

«Նրանց ջախջախելու», ծրագիրս թարգմանուեցաւ յոռնաբէնի:

Յայնքը, որոնք անշուշտ մենէ աւելի ռեզինա խմած էին, խանդավառութեամբ «Ձիթօ», սկսան գոչել ու եկան ուսիս զարնել և ձեռքս օղջմել:

Բերէի մէջ առաջին գիշերս ահա այսպէս անցաւ:

(Շարունակելի) ԺԻՐԱՅԻՐ

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Յարուբին Հայանեան պատիւ ունի ծանուցանել իր բազմաթիւ յանձնարարներուն քէ իր կօշակարի խանութը Պազար Մուրուհէն փոխադրած է Բաճիկ Էմիլիոնի դիմացի կարգը՝ կազմի բնկերուքեան կեդրոնին մօտ բաւաժին մէջ, գետնայարկ, քիւ 6:

Ձեռաւոր ու բնիք կօշիկներու պատրաստութիւն դիւրամասշնչի գնեով:

ՏԻԿԻՆ ՍՕՅԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Տիկին Ազգապետեան որ ծանօթ է իր արհեստին մէջ ունեցած հմտութեամբ եւ վարպետութեամբ, կը ծանուցանէ իր բազմաթիւ յանձնարարներուն ինչպէս նաեւ յարգոյ հասարակութեան քէ իր բնակութիւնը փոխադրած է Եկեղեցիի մօտ Խուրուհիէ փողոցը քիւ 53. (Ֆոտոգրաֆիկ վարժարանին ֆոլիսի փողոց):

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՌԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն եւրոպական լուսազոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով: Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ: Թարմ հաճախից ջուրեր, անուշահոտութիւններ. Բնականական և մանրագիտական քննութիւններ: Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծառի բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար: 27-50

ՅՕԹՕԿՐԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻՐԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՍՈՒՀԱՄՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիններով:

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐԻ 10-10

Ա. ԼԷԹՈՒԱԼ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ փաճառատունէն Տեարք Յովակիմեան Եղարք այսօրվա հաստատուած են ի Գահիրէ և Մուսթի փողոցը՝ Լաթէսի գոհարափաճառատան զիմաց բացած են վաճառատուն մը որ կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն ֆաբրիկա, գուլպայ և դանդաղան տեսակ ընտիր շապիկներ, օձիքներ, քեւնոցներ:

Ճօրս գանազանութիւն մարօֆէնքրի, հոսեղէններու և աղուզարդի վերաբերեալ ամեն տեսակ սպորանայ: Շեֆիլթի հաշակաւոր պողպատեայ գործիներ, ամեյի, միրաս, զմեյի կը:

ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆՆԵՐ:

Գուտաներէն եկած յանձնարարութիւնք ճշդիւ և փութով կը կատարուին: 24-24

ԼՈՒՍՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ԲՕՒԹԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶՍԵԱՆԻ ՆԱԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒՍՑ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հազուստներ. ԿԱՐԴԿԷ արանց և կանանց շապիկներ, շրջագոստներ, կըն. մաքրութիւն, ճշդապահութիւն, և խիստ չափաւոր գին: 22-24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԸ ԱՂԵՑՍԱՆԲԵՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպիւս 1 2 3 կարգ	
								Երեկ.	Երեկ.
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա)	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
	մեկ. 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՑՍԱՆԲԵՐԻՈՅԸ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Օմնիպիւս 1 2 3 կարգ	
									Երեկ.	Երեկ.
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	—	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	—	1 9
	ժամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56	—
Թանթա)	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6	—
	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25	—
Պէնհա	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՕՏ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՕՏ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	—	Սիւէզ (բարափ)	մեկ. 9 50	—	—
Պէնհա)	ժամ. 12 28	7 48	—	» կայարան	» —	3 30	—
	մեկ. 12 33	7 53	—	Խամիլիա	» 1 20	7 5	—
Ջակադիկ)	ժամ. 1 34	8 54	—	Ջակադիկ)	ժամ. 3 7	8 53	—
	մեկ. 1 44	9 4	—	»)	մեկ. 3 17	9 3	—
Խամիլիա	մեկ. 3 40	1 —	—	Պէնհա)	ժամ. 4 13	9 47	—
Սիւէզ կայարան	ժամ. —	5 —	—	»)	մեկ. 4 17	9 4	—
Տք (բարափ)	ժամ. 6 55	—	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35	—